

խանեց տղան, դուն կը տանիս նոյն խակ զԱնիկա որ կը կրէ աշխարհը (Ham. Բ. էջ 289):

ը) Կանանց փարայրը. — 570 ին Անտոնինոս վկայ կը գրէ. Յորդանանի եզերքին վրայ կը գտնուի քարայր մը, ուր կան եօթը խուցեր և անոնց մէջ եօթը կիներ՝ որոնք հոն ղրկուած էին՝ տակաւին անչափահաս. երբ անոնցմէ մին կը վախճանի՝ կը թաղուի իր սեպհական խուցին մէջ, և ուրիշ մը կը բերուի անոր տեղը, և այս կերպով թիւը հաստատուն կը պահուի: Կը գտնուին նաև առանց խուցի անձեր ալ որոնք կը զբաղին կերակուրի պատրաստութեամբ: Ուխտաւորները մեծ յարգանքով կը մտնեն այստեղ աղօթելու համար, բայց այս կիներէն ոչ մէկուն երեսը կը տեսնեն: Կ'ըսուի թէ այստեղ կը գտնուի այն Վարչամակը որ Յիսուսի գլուխը կը կապուէր (P. T. S. հատոր Բ. էջ 11):

բ) Ստաշխը և յոսար Ս. Երկրի սուանդութեան մեջ. — Ստաշխը (styrax officinale, Հկ. Բ. էջ 581) նուիրական ծառ մըն է, վասնզի անոր կուտերը կը գործածուին վարդարաններ շինելու: Երբ Մովսէս Փարաւոնի ձեռքէն փախաւ և քաշուեցաւ անապատի մը մէջ՝ ուր շուք չկար, ստաշխի փայտը տնկեց հողին մէջ և ընկողմանեցաւ անոր տկար շուքին տակ: Աստուած վայրկենական փայտը աճեցուց լայն տերեւներով եւ ծաղիկներով: Մարիամ խոտի կամ եղիսպակի նման շատ յարգի է ան, ոչ միայն իր բժշկական յատկութեանց համար, երբ իր չորցած տերեւները կ'այրուին հնտախտի, ծաղկախտի, հարսանիթի և ուրիշ տարափոխիկ հիւանդութեանց ժամանակ, այլ նաև երբ Ս.